



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՍՈՒՐԲ ՄՍՈՒՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ



որին Ս. Օծուրյուն Ամենայն Հայոց Կաթողիկոս Ս. Տ. Վազգեն Ա-ի անունից Մայր Աթոռի պաշտոնաբեր «Էջմիածին» ամսագիրը սրտագին պարտականություն ունի շնորհավորելու և՛ Մայր Հայրենիքի և՛ Սփյուռքի բովանդակ հայ հավատացյալ ժողովրդի նոր տարին և Քրիստոսի հրաշափառ Ս. Ծննդյան տոնը:

Հավատացյալ մայրե՛ր, փույրե՛ր և եղբայրե՛ր.

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ:

«ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱՒ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱՒ»:

Ահա մի նոր տարի ևս՝ 1957 թվականը, իր սրտառույ խոհերով, խնդությամբ, հույզերով և երազանքներով: Նոր տարին սկսել՝ նորոգված հույսով, հավատով, կամքով, լավատեսությամբ, մաքուր սրտով, հաշտված մարդկանց և Աստուծո հետ:

1956 թվականն էլ անցավ հավերժության, անհունի գիրկը, և մարդկությունը մի անգամ ևս սրտատուփ, հույսով ու հավատով լի, կանգնել է նոր տարվա շեմին:

Այսպես, տարիները իրար են հաջորդում, նույն և նման ժամանակի տեսակետից, սերունդները գալիս են ու գնում:

Ժամանակն է միայն, որ մնում է հավիտենական, անփոփոխ: Ժամանակի մասերի բաժանումը արհեստական է: Մենք ենք, ՈՐ ԱՆՅՆՈՒՄ ԵՆՔ ՈՒ ՓՈԽՎՈՒՄ: Սաղմոսերգուն իր փորձառությամբ շեշտում է կյանքի վաղանցիկ բնույթը և փառաբանում է միայն Աստուծո հավիտենականությունը: Մարդու կյանքի օրերը, ամիսներն ու տա-

րիները «ընդ առաւօտս որպէս դալար զուարեացին և ծաղկեացին, ընդ երեկոյն քարշամեացին, չորացին և անկցին» (Սաղմ. 20, 6—7): Ժամանակի մեջ մենք ենք, ու փոխվում ենք, մինչ ժամանակը մնում է նույն և հավիտենական: Հունվարի 1-ը, որպէս ժամանակի նվազագույն միավոր հասկացողություն, նույնն է տարվա բոլոր օրերի հետ: Մեր մեջ շարունակվում է ժամանակի հավերժական հոսանքը: Ոչ թէ ժԱՄԱՆԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ, այլ՝ ՄԱՐԳՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ժամանակի մեջ. նոր տարվա օրը անհ հիմնական հարցը: Այս աշխարհի վրա չկա հավերժություն բացի Աստուծոց, որովհետև. «հազար ամ յաշխեառն որպէս օր երէկի»:

Քայց մարդիկ միշտ ձգտել են հավիտենական, անբառամ կյանքի, ուզեցել են ապրել հավերժօրեն: Իսկ ի՞նչ է ժամանակի մեջ մարդկային կյանքը, «որպէս պահ մ'գիշերոյ», և այն էլ «ենծուրեամբ և ցաւօք» կյանքի անցավորությունը, մարդու անկատարությունը, սահմանափակությունը վիշտ և հուսահատություն է պատճառել մարդուն Այդ անբառամ, «առաւելեալ կեանք»-ը մի օ հայտնվեց ժամանակների մեջ: Քրիստոս այն բերեց աշխարհ մարդկության համար:

Քրիստոս իր ծննդով հայտնվեց մարդկանց համար որպէս ՃԱՆԱՊԱՐԶ, ՃՇՄԱՐ ՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՅԱՆՔ: Նա ծնվեց այրում մի մսուրի մեջ, որը խորհրդանշում է Քրիստոսի պարգույունն ու փրկատնական կյանքի առատությունը, պարգույան մեծ վսեմությունը, ներդաշնակությունը:

Քրիստոնեության արշալույսին հին աշխարհը ապրում էր կրոնական, քաղաքական, քաղաքական մի մեծ ճգնաժամ: «Ամենայն գլուխ ի ցաւս և ամենայն սիրտ ի տրամուրիւն, յոտից մինչև ցգլուխ շիֆ ի նմա առողջութիւն... շիֆ սպեղանի ի վերայ դնել, ոչ ձէք, ոչ պատանս (Յսայի, Ա 5—6):

Հին աշխարհի մեծ փիլիսոփաներից Պլատոնը խոսում է այն մասին, որ «մինչև որ մեկը չիջնի երկնքից», չկա հնար մարդկային ազատության և փրկության:

Վերգիլիոսը հասած էր համարում մարդկության փրկության գործը, իր ապրած դարում: Մեղքի, տգիտության, նախապաշարմունքների մեջ ապրող մարդկությանը չէին օգնել ոչ փիլիսոփայական տարբեր սիստեմները, ոչ մոգական ծեսերը, ոչ էլ մեհենական ուխտագնացությունները և խորհրդապաշտական արարողությունները: Մարդիկ սպասում էին ԵՐԿՆՔԻՅ իրենց ԱԶԱՏԱՐԱՐԻՆ, ՓՐԿՉԻՆ: Եվ «ի լուսն ժամանակաց» ծնավ աշխարհի այդ Փրկիչը Բեթղեհեմում, մի խաղաղ ու սուրբ գիշերվա մեջ, որպես երկրնքի ու երկրի մեջ հաշտության և խաղաղության միջնորդը և որպես զոյս ի յայտնութիւն հեթանոսաց», «Մանուկ ծնաւ մեզ, որդի տուա... և անուն կոչեցաւ նմա՝ Հրեշտակ մեծի խորհրդոյ. Սփանշելի, Խորհրդակից, Աստուած հօգօր, Իշխան, Հայր հանդերձելոյ աշխարհին» (Յսայի, Թ 6):

Խաղաղությունը, համերաշխությունը, հաշտությունը դարձրելով մարդկանց երազը և սրտի կարոտն են հանդիսացել, որոնց հույսով ապրել են անցյալում սերունդներ:

Իսրայելի մարգարեները շատ բան են գրել ու երագել խաղաղության մասին: Հին աշխարհի մեծ տեսանող Յսայի մարգարեն այսպես է նկարագրում իր երագած խաղաղությունը. «Դայլը գառան հետ միասին կհարակի, ինձր ուրի հետ կմակաղի, հորրը, ցուր և առյուծը միասին կհարակեն և դեռաւոր մանուկը կհովվի նրանց» (Յսայի, ԺԱ 6—9):

Քրիստոս Իր ծննդով վերգիլյալ աշխարհի մեջ հայտնվեց որպես Խաղաղության իշխան՝ խաղաղեցնելու ինքն իր մեջ անհամերաշխ և իրար դեմ մաքառող խռոված մարդկությունը, անխաղաղ աշխարհը: Աշխարհը փրկության էր կարոտ եր ևս ծնվեց, Աստված գրաց մեղավոր մարդկության վրա և նրան մեղքից ազատելու համար. կատարեց գերագույն զոհողությունը, տվեց Իր Միածին Որդուն: Աստուծո նպատակն էր երկրի վրա արդարություն, խաղաղություն հաստատել:

Ուղեկորույս մարդկությունը հազարամյակներ շարունակ որոնում էր նշմարիտ նախապահը, «որ տանի ի կեանս յալիտեհականս»: Հին աշխարհը իր փիլիսոփայական բոլոր սիստեմներով, իր քաղաքական սկզբունքներով ու քաղաքներով չկարողացավ ու չէր կարող նշել նշմարիտ նախապահը մոլորված մարդկության:

Քրիստոս Իր ծննդով հայտնեց լույսի և կյանքի իսկական նախապահը գլխավորում որոնելու, գտնելու, նախաշելու և սիրելու.

«այստեհեալ յես ծառայ, այլ որդի և ժառանգ Աստուծոյ» (Դաղատ., Դ 4): Քրիստոսով միայն մարդիկ կարող են հասնել աստվածային խաղաղության և երանության:

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը շատ զեղեցկորեն բացատրել է Մենդյանի պատգամին մեջ Քրիստոսի Ս. Մենդյան խորհուրդը.

«Երանելու երկունքով, մարդկային գիտակցությունը երկնքի դռները բացավ, ստանալու համար մեծ ու փրկարար ավետիսը, զոր երանելի գիշեր մը, հսկող հոգիները բաժնի ու խոնարհ հովիվներուն երկնքեն յսեցին այն պահուն, երբ Բեթղեհեմի մտուրին մեջ կծներ մանուկն Հիսուս, լուսավորելու համար աշխարհը լույսով արդարության:

Հիսուս ծնավ խաղաղության աստվածային պատգամով, Հիսուս ապրեցավ խաղաղություն և սեր քաղաքներով, Հիսուս երկնք համբարձավ, մարդոց ու աշխարհին բողոքով մեծ կտակը Իր խաղաղության:

Աստվածորովույն ծնունդը նոր, կենդանի շունչ փչեց մարդու հոգեկեն շինվածքին, լուսավորեց զայն նշմարտության լույսով, զորացուց արդարության զրանով, զեղեցկացուց բարության հոգիով, չեմացուց սիրտ կրակով, ազնվացուց խաղաղության տենչով:

Հիսուսի ծնունդը վերածնունդն է մարդուն:

Հիսուսի ծննդով կնքվեցավ կենաց և խաղաղության ուխտը Աստուծո և մարդու միջև:

Մարդկային մտքի պատմությունը գերագույն նշմարտության որոնման պատմությունն է: Ճշմարտությունը միշտ քաֆնված է եղել մարդու համար լեռան ետին: Տիեզերքը, կյանքը լիքն են խորհուրդներով, քաֆնված նշմարտություններով, իրողություններով: Մարդը շատ քիչ բան միայն գիտի այդ քաֆնված նշմարտությունների մասին: ՀԱՅՏՏՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԸ հավատի միջոցով սակայն նառագայրում է մարդու հոգու մեջ, և նրա ներքին ետը, խորունկ ինքնազգայարծումով, հզոր ներհայեցողությամբ տիրա-

նում է մեծագույն հայտնության: Աստված է, որ միշտ հայտնվել և հայտնվում է: Գերագույն ճշմարտությունը Աստուծո հայտնությունն է պատմության մեջ, որ Վասն մեր մարմնացաւ:

Քրիստոսի մարդեղությամբ, աստվածային ճշմարտության լույսը լցվում է մարդու հոգու մեջ, տիեզերքն ու կյանքի գաղտնիքները պարզվում են ու հավատավոր հոգիներին վրա իջնում է անսահման խաղաղություն, երանություն, ճշմարտության այդ լույսի ճառագայթումով:

Քրիստոս Իր ծննդով հայտնվեց աշխարհում նաև որպես հավիտենական կյանք. «զի զկեանս ունիցիի և առանի ևս ունիցիի»: Մարդիկ ձգտել են այն «առավել կյանք»-ին, այսինքն անվախճան ԵՐԶԱՆԿՈՒԹՅԱՆԸ, ԳԵՐԱԳՈՒՅՆ ԲԱՐԻԻՆ, ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՍԻՐՈ, կյանքի աղբյուրին, որ է Աստված: Հավիտենական կյանքը, երջանկությունը սակայն ստված է Քրիստոսի միջոցով, որովհետև նա է կյանքի բարձրագույն և լիարժեք իրագործումը. «որ հաւատայ յիս՝ կեցցէ»: Քրիստոն-

յան պիտի ապրի Քրիստոսի հետ նրա կյանքով, հասնելու համար կյանքի հավերժության: Քրիստոս Իր ծննդով ԿՅԱՆՔԸ փրկեց ՄԱՐԴՈՒ համար: Անցավոր կյանքի հիմքն ու պայմանները փոխվեցին: «Առավել կյանքը Քրիստոսի մեջ մարմնավորվեց: Հավերժական կյանքի ԵՐԿՐԱՎՈՐ մասը «առատորեն ապրելու համար քրիստոնյան պետք է հետևի Քրիստոսի:

Նոր տարվա սեմին, Քրիստոսի Ս. Մերեղյան այս սրբազան օրերին, Ամենայն Հայոց Հայրապետի սրտագին բարեմաղթությունն այն է, որ 1957 թվականին էլ «Տէր Աստուա հարցն մերոց» լինի «ՀՈՎԱՆԻ ԵՎ ՊԱՀԱՊԱՄԵՐ ԱՇԽԱՐՀԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ, ԵՊԱՀՆ, ՊԱՀՊԱՆԵ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԱՊՍՀՈՎ ԵՎ ԱՆՎՐԴՈՎ, ԱՄԲՈՂՁ ՈՒ ԱՆՍԱՍԱՆ ԵՎ ՈՂ ՏԵՐ, ՀԱՅՈՑ ԵՐԿՐԵՐ ՏԱԿ ԱՅԺՄ ԵՄԻՇՏ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԹՈՂ ԸՂԱՍ:

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՁԵՁ ԲՈՂՈՐԻԴ, ՍԻՐԵՆ, ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԶԱՎԱԿՆԵՐ ՄԵՐ»:

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՎ Ս. ՄՆՈՒՆՔ

